Հաշվետվություն

Անունը, Ազգանունը

Միեր Գրիգորյան

Զբաղեցրած պաշտոնը

Փոխվարչապետ

Գործուղման վայրը և ժամկետները

Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 13.09.18-15.09.18

Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն ԱՊՀ տնտեսական կոմիտեի նիստին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի նիստին:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

ԱՊՀ տնտեսական կոմիտեի նիստի օրակարգում էին ԱՊՀ մասնակից պետությունների միջև տնտեսական համագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր:

Նիստի ընթացքում քննարկվել են Ազատ առևտրի գոտու մասին պայմանագրի և մի շարք միջպետական ծրագրերի դրույթների իրականացման ընթացքը, ինչպես նաև անդրադարձ է կատարվել 2020 թվականին ԱՊՀ մասնակից պետություններում մարդահամարի իրականացման համար նախապատրաստական աշխատանքներին վերաբերող մի շարք հարցերի:

Նիստի օրակարգում էին նաև տիեզերական ոլորտում ուսումնասիրությունների, հարկային վարչարարության շրջանակներում էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման և մի շարք այլ բնագավառներում ԱՊՀ մասնակից պետությունների համատեղ գործունեության վերաբերյալ փաստաթղթերի նախագծերի քննարկումը:

Մասնակիցներին ներկայացվել է գիտատեխնիկական և նորարարական ոլորտներում համագործակցության հարցերով միջպետական խորհրդի գործունեությունը: Փոխվարչապետները մտքեր են փոխանակել նաև Ժողովրդական տնտեսության ձեռքբերումների ցուցասրահ-համալիրի տարածքում ազգային առևտրացուցահանդեսային կենտրոնների ստեղծմանն ու գործունեությանը վերաբերող հարցերի շուրջ:

Նիստի ընթացքում մասնակիցները քննարկել են նաև մի շարք ֆինանսական և կազմակերպչական հարցեր:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի նիստին ընդունվել են մի շարք որոշումներ առևտրի, տնտեսության թվայնացման, արդյունաբերության, ֆինանսական քաղաքականության և տեխնիկական կարգավորման վերաբերյալ:

ԵԱՏՀ խորհուրդը ի թիվս այլ փաստաթղթերի հաստատել է ԵԱՏՄ և Իրանի միջև առևտրի ազատ գոտու ձևավորմանը միտված ժամանակավոր համաձայնագրի և ԵԱՏՄ-ի ու Չինաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության համաձայանգրի կիրարկման ուղղությամբ մշակված ճանապարհային քարտեզները:

ԵԱՏՀ խորհրդի նիստի անդամներին ներկայացվել են ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքները, մասնավորապես նշվել է, որ հիմնական նախաձեռնությունները վերաբերում են թվային տրանսպորտային միջանցքներին և ֆինանսական տեխնոլոգիաներին, միաժամանակ ընդհանուր աշխատանք է տարվում համացանցային առևտուրը զարգացնելու ուղղությամբ:

ԵԱՏՀ խորհուրդը ընդունել է տեխնիկական կանոնակարգ գազի անվտանգության վերաբերյալ և փոփոխություններ է կատարել սննդամթերքի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգում:

Ստորագրվել են ԵԱՏՄ անդամ պետությունների ֆինանսական շուկայի ոլորտում օրենսդրությունների ներդաշնակեցման մասին համաձայնագիրը, որը սահմանում է բանկային, ապահովագրության և արժեթղթերի շուկայի վերաբերյալ ԵԱՏՄ երկրների օրենսդրությունների ներդաշնակեցման ուղղություններն ու կարգը՝ հիմնված միջազգային սկզբունքների և չափանիշների վրա:

Նիստի ընթացքում ԵԱՏՀ խորհուրդը հանձնաժողովի կոլեգիային հանձնարարել է մշակել եվրասիական ոսկերչական բրենդ ձևավորելու ուղղությամբ ինտեգրացիոն նախագիծ: Խորհրդի անդամները նաև ընդունել են մի շարք առևտրին առնչվող որոշումներ:

Գործուղվողը

Միեր Գրիգորյան

Ամսաթիվը

01.10.18